

**ՀՀ Վայոց ձորի մարզպետը հանդիպել է „Լույս,, հիմնադրամի աջակցությամբ աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող մի խումբ ուսանողների**

11.07.2013



ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը ս/թ հուլիսի 9-ին հանդիպել է „Լույս,, հիմնադրամի աջակցությամբ աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող մի խումբ ուսանողների, որոնք հանգրվանել էին Վայոց ձորի մարզի Հերմոն համայնքի տարածքում գործող „Լուսի,, տուրիստական հանգստի տանը:

Մարզպետ Էդգար Ղազարյանը գրուցել է ուսանողների հետ նրանց ուսումնառության հետ կապված ծրագրերի մասին, ինչպես նաև ձեռք բերված գիտելիքներով մեր երկրի տնտեսության զարգացմանը օգտակար լինելու հարցերի շուրջ:

Հանդիպմանը մասնակցել է նաև մարզպետի տեղակալ Արամ Գրիգորյանը: